
**ԳՈՒՆԱՅԻՆ ՊԱՏԿԵՐՆԵՐԻ ԸՆԿԱԼՈՒՄԸ
ՇԵՔՍՊԻՐԻ ՍՈՆԵՏՆԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ ՈՒ ԻՍՊԱՆԵՐԵՆ
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Մ. Բ.

Ոճագիտությունը լեզվի ոճի ուսումնասիրությունն է: Այն կարող է սահմանվել որպես յուրօրինակ լեզվական արտահայտչամիջոցների վերլուծություն և դրանց արդյունքների ու ազդեցության նկարագրություն¹:

Ոճագիտության մեջ զանազան հնարքներով ստեղծվում են տեսողական, լսողական, համի, հոտի և շոշափելիքի պատկերներ: Անդրադառնալով տեսողական պատկերներին՝ մասնավորապես գույնի ընկալումը, արևածագի և մայրամուտի գունային փոփոխությունների փոխաբերական կիրառումներին: Այսպես՝ մեկնաբանենք գույնի զգայական ընկալման բառային նկարագրությունը Շեքսպիրի սոնետներում և թարգմանական ու լեզվաոճական արտահայտչամիջոցների վերլուծությամբ ներկայացնենք, թե ինչպես են Շեքսպիրի սոնետների և դրանց հայերեն ու իսպաներեն թարգմանությունների ոճական տարբեր առանձնահատկությունները ստեղծում որոշակի ազդեցություններ:

Զգայական ընկալման² ճանաչողական մոտեցումը դիտարկում է, թե շարժառիթն ու երևույթի ակնկալվող իմաստներն ինչպես են ազդում վերջինիս վրա³: 1960-ական թթ. սկզբին զգայական ընկալման ճանաչողական ծավալը որոշելու համար հոգեբանական զարգացման նոր ուղղություն ներմուծվեց, որը կոչվեց ճանաչողական հոգեբանություն⁴:

Խոսքի ընկալումը կախված է մի շարք գործոններից՝ հնչյուններից, ձայնաբանական ազդակից, գիտելիքից, իմաստաբանությունից և շարահյուսությունից: Ջ. Միլլերի և Ս. Իզարդի կատարած փորձը հետամտում էր, թե իմաստաբանությունն ու շարահյուսությունն ինչպես են ազդում խոսքի ընկալման վրա⁵: Մարդկանց զգայական ընկալումը կախված է նաև այն համատեքստից, որում գործում է շարժառիթը: Նույն տեսանկյնի շարժառիթը տարբեր տեսողական

¹ Verdonk Peter. Stylistics, Oxford University Press, Spain, 2003, p. 4.

² Զգայական ընկալումն այն գործընթացն է, որով ստեղծվում է իրականությունը՝ ըստ անձի փորձառությունների, ապրած ժամանակաշրջանի, ապրելավայրի և մշակութային արժեքների (Bloomer, Carolyn M. Principles of Visual Perception, 2nd ed., New York, 1990, p.43):

³ Goldstein E. Bruce, Sensation and Perception, Pacific Grove, Calif: Brooks / Cole Pub., USA, 1996, p. 24.

⁴ Նույն տեղում:

⁵ Իմաստաբանությունն ուսումնասիրում է նախադասության մեջ կիրառված բառի համապատասխանությունը մտքին՝ ըստ բառիմաստի: Շարահյուսությունը սահմանում է նախադասության կառույցների թույլատրելի կանոնները (նույն տեղում):

¹⁰ Ingram W. G. and Redpath Theodore. *Shakespeare's Sonnets*, London, 1964, p. 304.

տեղծն իր սիրելիի գեղեցկությունը տեսնում է նրա աչքերում: “Morning sun” («առավոտյան արև») /5-րդ տող/, “grey cheeks of the east” («արևելքի գորշ այտեր») /6-րդ տող/, “full star” (կարելի է թարգմանել «աստղալից» կամ «պայծառ աստղ») /7-րդ տող/, “sober west” («զուսպ արևմուտք») /8-րդ տող/ բառակապակցությունների ու մակդիրների համեմատությունը “mourning eyes” («սգացող աչքեր») և “thy face” («քո դեմք») /9-րդ տող/ մակդիրի ու բառակապակցության հետ ենթադրում է, որ սիրելիի աչքերը նրա դեմքին նույն գույնն են հաղորդում, ինչ ծագող արևը կամ երեկոյան աստղը՝ անփայլ երկնքին:

Հայերեն թարգմանության մեջ «արեգակ» գոյականին ավելացված է «վառ» ածականը՝ շեշտելու բնագրի «արևելքի գորշ այտերը» արտահայտության իմաստը և արեգակի պայծառությունը: Վեցերորդ տողն իմաստաբանական թարգմանությունն է: Այստեղ գույն ցույց տվող “grey” բառը գործածված է իր երկու իմաստներով՝ ուղիղ («գորշ») և փոխաբերական («մռայլ»): Առաջին իմաստն օգտագործված է որպես «արևելքի» լրացում, իսկ երկրորդը՝ որպես «աչք-ունքի» լրացում: Բնագրի “cheeks” («այտեր») բառը հայերենում փոխարինված է «աչք-ունք» բառով՝ հավանաբար, հաշվի առնելով «արեգակի» և «աչքի» համեմատությունը: Յոթերորդ տողի “full star” («աստղալից» կամ «պայծառ աստղ») բառակապակցությունը հայերենում փոխարինված է «լուսնկա» բառով. լի, լուսավոր աստղն առաջնորդում, ուղի է բացում գիշերվա համար, իսկ լիալուսինը գիշերվա խորհրդանիշն է, որը լուսավորում է խավարը: Այդ իսկ պատճառով բնագրի “even” (բնաս. «երեկո») բառը փոխարինված է «գիշեր ու խավար» արտահայտությամբ: Իններորդ տողի “mourning” բառը հայերենում թարգմանված է «սև ու վշտահար»՝ ելնելով նշված բառի իմաստից՝ «սգացող»: «Վշտահար» որոշիչով պահպանված է բնագրի մակդիրի իմաստային համարժեքը՝ “mourning eyes” («սգացող աչքեր»): “Sober west” մակդիրը թարգմանված է բնագրի բառային համարժեքներով՝ «զուսպ Արևմուտք»: Թարգմանական փոփոխություններով շեշտված են արև ու լուսին, լույս ու խավար, գիշեր ու ցերեկ հակադրությունները: Նշված փոփոխությունների միջոցով հայերենում պահպանվել են բնագրի գունային առանձնահատկություններն ու դրանց գուգակցումը դեմքի փոփոխվող գույներին:

Եվ **արշալույսին** երկինք բարձրացող **արեգակը վառ** 5-8

Այնպես չի սագում **գորշ Արևելքի մռայլ աչք-ունքին**,

Եվ կամ **լուսնկան**, որ բերում է միշտ **գիշեր ու խավար**,

Փառք ու պարծանքով այնպես չի սագում **զուսպ Արևմուտքին**,

Որքան **քո դեմքին**՝ երկու **աչքերը սև ու վշտահար**: 9

Արևի պայծառությունն իսպաներեն թարգմանության մեջ շեշտված է “brillar” («փայլել») բայով: Արևածագն ընդգծելու համար «արշալույս» բառը կիրառված է երկու անգամ՝ “sol matutino” («առավոտյան արեգակ») և “en el alba” («արշալույսին»):

Այս թարգմանության մեջ բացակայում է 8-րդ տողը: Բնագրի «արևմուտք» բառի իմաստն ամբողջացված է «երեկո» բառի համատեքստային իմաստում, իսկ “glory” («փառք, շքեղություն, գեղեցկություն») գոյականը փոխարինված է “adornar” («զարդարել») բայով: “Adornar” («զարդարել») բայի կիրառությունն օգնում է նաև լրացնելու “full star” բառակապակցության “full” («լի, լուսավոր, պայծառ») որոշյալ իմաստը՝ թարգմանելով միայն “star” («աստղ») որոշյալը՝ “estrella”: Բսպաներենում բնագրի “mourning eyes” («սգացող աչքեր») մակդիրն արտահայտված է կապով՝ “ojos en duelo” («ցավի մեջ ապրող աչքեր»): Այստեղ նա մեկ բայ է ավելացված՝ “resplandecer” («շողալ»): Այս բայով պարադոքս է ստեղծված. սգացող աչքեր, որոնք շողում են: Բնագրում և հայերեն թարգմանության մեջ պարադոքսը նա առկա է, բայց այն ներքին իմաստով է գործածված: Բսպաներենում ավելացված “brillar” («փայլել») և “resplandecer” («շողալ») երկու հոմանիշ բայերը, “en el alba” («արշալույսին») բառակապակցությունը և “adornar” («զարդարել») բայն օգնում են ընդգծել բնագրի գունային պատկերը.

Y verdaderamente, ni el **sol matutino** que **brilla** en el cielo 5-9
aparece mejor a **las mejillas grises del Oriente en el alba**, ni **la estrella**
que se muestra a **la tarde adorna** ma´s que estos dos **ojos en duelo** que
resplandecen en tu rostro.

Դեմքի և արևածագի գույնի, արևի ու աչքի համեմատություններն առկա են նաև 33-րդ տնետում.

Full many a **glorious morning** have I seen 1-4
Flatter the mountain tops with **sovereign eye**,
Kissing with **golden face the meadows green**,
Gilding pale streams with **heavenly alchemy**...

Այս տնետը լի է գունային երանգներով: Կա գույների փոփոխություն, որոնցով ստեղծված պատկերն արտահայտված է գույն ցույց տվող որոշիչներով՝ “golden” («ոսկեշող») և “green” («կանաչ»): Երկրորդ տողի “flatter” բառը նշանակում է «քաջալերել և լուսավորել» (“encourage and brighten”)¹¹: “Flatter” («լուսավորել») բառով և “sovereign eye” («վեհապանձ աչք») մակդիրով շեշտված է արևի ու աչքի համեմատությունը: Չորրորդ տողում գունային փոփոխությունը պատկերված է առանց որևէ գույն նշելու՝ “pale streams” («(անգույն) գունատ առուներ»), որոնք գույն են ստանում արևի լույսով ոսկեզօծվելով (“gilding”):

Հայերեն թարգմանության մեջ “glorious morning” («փառապանծ այգաբաց») մակդիրը պահպանված չէ: Փոխարենն ավելացված է «ճաճանչ» բառը. այն օգնում է բնորոշելու արևի պատկերը, որը և՛ բնագրում, և՛ հայերենում կիրառված է փոխանունությամբ: Բնագրի մյուս մակդիրը՝ “sovereign eye”, պահպանված է՝

¹¹ Նույն տեղում, էջ 80:

«վեհապանձ աչք»: “Golden face” և “pale streams” մակդիրները նույնպես իրենց համարժեքներն ունեն հայերենում՝ «ոսկեշող դեմք», «զունատ առուններ»: “Heavenly alchemy” («երկնային ալքիմիա») մակդիրը հայերենում փոխարինված է «անանց լույս» մակդիրով: “Alchemy” («ալքիմիա») որոշյալը թարգմանված է «լույս», իսկ “heavenly” («երկնային, աստվածային») որոշիչը՝ «անանց»: Այս բառերի թարգմանությունը իմաստաբանական է: Հաշվի են առնված տեքստում գործածված «լուսայգ», «ճաճանչ», «ոսկեշող», «ոսկեզօծել» բառերը և բնագրի մակդիրի իմաստային ընդլայնումը. ոսկու գույնը զուգակցված է արեգակի լույսի և նրա ոսկեշող ճաճանչների հետ.

Ես շատ եմ տեսել՝ ինչպես **լուսայգին** ամեն մի **ճաճանչ** 1-4
 Կատարը լեռան գուրգուրել է իր **աչքով վեհապանձ**,
Ոսկեշող դեմքով համբուրել է միշտ **դաշտերը կանաչ**
Եվ ոսկեզօծել զունատ առուններն իր լույսով անանց:

Իսպաներեն թարգմանության մեջ պահպանված է “glorious morning” մակդիրը՝ “gloriosa mañana”: Քանի որ առավոտը բացվում է այն ժամանակ, երբ արևն է ծագում, այստեղ ավելացված է “sol” («արև») բառը: Բնագրում հենց այդ ներքին իմաստն է. արևն է գուրգուրում լեռների գագաթները: “Sovereign eye” մակդիրը թարգմանված է “potente luz” («զորավոր լույս»): Այստեղ ևս իմաստաբանական թարգմանություն է արված՝ “potente” («զորավոր») բառն իմաստով մոտ է “sovereign” («զերագույն, գերիշխանական») բառին, իսկ արևի աչքը արևի լույսն է: “Golden face” («ոսկեշող դեմք») մակդիրը փոխարինված է “labios de oro” («ոսկե շուրթեր») մակդիրով: Երկու դեպքում էլ կիրառված է փոխաբերություն: “Pale streams” («զունատ առուններ») և “heavenly alchemy” («երկնային ալքիմիա») մակդիրները ու “gild” («ոսկեզօծել») բառը պահպանված են՝ “pa’lidos arroyos”, “celeste alquimia” և “dorar”:

He visto **el sol**, ma´s de una **gloriosa mañana**, acariciar con 1-4
 su **potente luz** las crestas de los montes, besar con sus **labios de oro**
 las verdes praderas, y, por **celeste alquimia**, **dorar los pa’lidos arroyos.**

Հայերեն և իսպաներեն թարգմանություններում լեզվառճական փոփոխություններն արված են սոնետում նկարագրված արևածագի գույները ճիշտ բնորոշելու համար: Ինչպես բնագրում, այնպես էլ թարգմանությունների մեջ գույները հաճախ արտահայտված են բառերի ներքին իմաստներում:

Ծագող արևի տեսարանը սոնետներում կապվում է երիտասարդության, եռանդի, ուժի, պայծառության, լավ տրամադրության ու նոր կյանքի հետ: Մայր մտնող արևի տեսարանում բանաստեղծը տեսնում է ոչ թե գույնի շքեղությունը, հանգստությունն ու մեղմությունը կամ հաջորդ օրվա խոստումը, այլ ամեն ինչի վերջը, ծերությունը, մոտալուտ փոթորիկները, տառապանքը, վտանգը, մոտալուտ գիշերը և գիշերային

գույները: Այս մոտեցումն արտահայտված է 7-րդ ստեղծում, որտեղ մարդը պատկերված է՝ արևը երկրպագելիս, երբ վերջինս «բարձրացնում է իր ճառագող գլուխը» և բարձրանում երկինք: Ըստ Շեքսպիրի՝ արևը նման է ուժեղ երիտասարդի, բայց երբ «երեքշաբթի մի ծերունու պես, թեքվում է օրից», մարդիկ աչքերը մի կողմ են դարձնում դեպի իրենց ուղղված ճառագայթներից:

But when from highmost pitch, with **weary car**, 9-12
Like **feeble age he reeleth** from the day,
The **eyes**, fore duteous, now **converted** are
From his **low tract**, and **look another way**...

“Car” («կառք») բառը ենթադրում է արևի աստծո կառքը: Տասնմեկերորդ տողի “convert” («դարձնել») բառն այստեղ նշանակում է “turn” («թեքվել»), իսկ տասներկուերորդ տողի “tract” («տարածություն, ուղի») բառը գործածված է որպես “path” («ուղի, ճանապարհ»)¹²: Մայրամուտի պատկերը ստեղծված է փոխաբերությամբ, “weary car” («հոգնաբեկ կառք»), “feeble age” («տկար ծերունի (ծերություն)»), “low tract” («դանդաղ ուղի») մակդիրներով, մայր մտնող արևի և ծերունու համեմատությամբ:

Հայերեն թարգմանության մեջ պահպանված է բնագրի “weary car” մակդիրը՝ «հոգնաբեկ կառք»: Երկրորդ տողի “feeble age” («տկար ծերունի») մակդիրը թարգմանված է մեկ բառով՝ «ծերունի», այսինքն՝ «տկար» որոշյի իմաստն ամբողջացված է «ծերունի» որոշյալով: “Reel” բայը թարգմանված է իր երկու իմաստներով՝ «երեքալ» և «թեքվել»: Առաջին իմաստը վերագրված է «ծերունի» բառին, իսկ երկրորդ իմաստը՝ արևին: Բնչպես բնագրում, այնպես էլ հայերեն թարգմանության մեջ 9-րդ և 10-րդ տողերն արտահայտված են համեմատությամբ: Տասնմեկերորդ և տասներկուերորդ տողերը հայերենում հակադրական թարգմանություններ են: “Low tract” («դանդաղ ուղի») մակդիրը թարգմանված է «ճանրաքայլ ընթացք»: “Look another way” («ուրիշ ուղղությամբ նայել») արտահայտությունը փոխարինված է «չեն նայում մարդիկ» արտահայտությամբ, այսինքն՝ դարձվածի իմաստը նույնն է՝ անկախ նախադասությունների հաստատական և ժխտական լինելուց: Այս արտահայտության «մարդիկ» բառի գործածումը կապված է նախորդ տողի “eyes” («աչքեր») բառի կիրառման հետ՝ մարդկանց աչքերը: Ստեղծի 8-րդ տողի (“Attending on his golden **pilgrimage**”) «ուխտավորություն» բառից ելնելով՝ հայերեն թարգմանության մեջ 12-րդ տողում ավելացված է «հեզ ուխտավոր» մակդիրը, որը վերագրված է արևին: Այսինքն՝ հայերենում ևս մեկ անգամ շեշտված է արևի ուխտավորության ոսկեշող ուղու գաղափարը:

¹² Smith Barbara Herrnstein, նշվ. աշխ., էջ 61:

Բայց երբ գերագույն ինչ-որ բարձունքից, **կատքով հոգնաբեկ**, 9-12
 Ու **երեքալով մի ծերունու** պես, **թեքվում է** օրից,
Չեն նայում մարդիկ նրա **ծանրաքալ ընթացքին** երբեք,
 Եվ **աչքերն** այդժամ անձայն **թեքվում են հեզ ու խտավորից**:

Իսպաներեն թարգմանության մեջ “weary car” մակդիրը պահպանված է “carro fatigado”: “Feeble age” («տկար ծերունի») մակդիրը ևս պահպանված է՝ “viejo achacoso”: “Reel” («երեքալ») բառը թարգմանված է “abandona lentamente” («դանդաղ լքում է»), որով շեշտվում է ծերունու տկարությունը: Այս արտահայտությունը համարժեք է բնագրի մտքին. արևը դանդաղ լքում է օրը և արևը թեքվում է օրից, այսինքն՝ արևը մայր է մտնում: “Convert” (այստեղ՝ «թեքվել») բառն ունի իր համարժեքը՝ “desviarse” («թեքվել»): “Low tract” («դանդաղ ուղի») մակդիրը թարգմանված է “carrera declinante” («կոր, թեք ուղի»)՝ վերագրվելով արևի՝ օրից թեքվելուն՝ մայր մտնելուն:

Pero cuando llegan al cenit con su **carro fatigado**, como un **viejo** 9-12
achacoso abandona lentamente el día, **los ojos**, fieles hasta entonces,
 se **desvi**an ahora de su **carrera declinante** y **miran a otro lado**.

Ի հակադրություն արևածագը բնորոշող տողերի՝ այստեղ մայրամուտի տեսարանը նկարագրված է առանց որևէ գունանուն օգտագործելու: Այնուամենայնիվ, սոնետի մեկնությունից պարզ է դառնում, որ մայրամուտի գունային երանգները խտացված են վերլուծված տողերի ներքին իմաստներում:

Չնայած բառային, ոճական որոշ փոփոխություններին՝ թարգմանություններում պահպանված են և՛ արևի պատկերը, և՛ գունային փոփոխություններն ու հակադրությունները:

Վերլուծված սոնետները լուսաբանում են, թե ոճական առանձնահատկություններն ինչպես են արտահայտում գունային բազմաթիվ դրսևորումները և ենթադրվում լեզվաբանական վերլուծության: Հայերեն և իսպաներեն թարգմանությունների վերլուծություններով ցույց է տրված նշված լեզուներին հատուկ ոճական և լեզվական միջոցների պահպանումն ու փոխարինումը՝ բնագրի իմաստից չրհեռանալու և նկարագրված պատկերները պահպանելու համար: Ինչպես կարելի է նկատել, թարգմանություններում կան և՛ պահպանված համարժեք միջոցներ, և՛ որոշ իմաստային մոտեցումներ: Վերջիններս օժանդակում են, որ տվյալ լեզվի կրողը ճիշտ հասկանա համատեքստը: Այս դեպքում հաշվի են առնված և՛ տեքստը, և՛ վերջինիս ներքին իմաստը:

Ինչպես բնագիրը, այնպես էլ հայերեն և իսպաներեն թարգմանությունները ցույց են տալիս, որ լեզվաոճական միջոցներով ստեղծված գունային պատկերներում կարելի է կիրառել գունանուններ, բառեր, որոնց ներքին

իմաստների վերլուծություններն արտահայտում են գույներ կամ, բացարձակորեն գույն չնշելով, ստեղծել պատկերներ, որոնցում հնարավոր է գունային երանգներ ընկալել:

**ВОСПРИЯТИЕ ЦВЕТОВЫХ ОБРАЗОВ В АРМЯНСКИХ
И ИСПАНСКИХ ПЕРЕВОДАХ СОНЕТОВ ШЕКСПИРА**

ОГАННИСЯН М. Б.

Резюме

В своих сонетах В. Шекспир нередко обращается к цвету и его оттенкам, символизирующим движение и жизнь. Цвет как таковой и выражение человеческого лица, передающего те или иные оттенки внутреннего эмоционального состояния, ассоциируются с цветом восхода и заката солнца (сон. 7, 33, 132). Картина восходящего солнца олицетворяет юность и начало новой жизни, в то время как закат в поэтическом мышлении Шекспира являет собой завершение жизни, старость, которой созвучны ночь и ее оттенки.

В армянских и испанских переводах шекспировских сонетов (сон. 7, 33, 132) использованы равноценные стилистические и экспрессивные средства, подвергнутые тем или иным лингвостилистическим изменениям в целях сохранения духа оригинала. Как оригинал, так и армянские и испанские переводы явствуют о том, что с помощью лингвостилистических средств можно создать цветковые образы, используя названия цветов или выражения, характеризующие цвет.